



ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

Երբեք չի մարել հետաքրքրությունը Նարեկացու և նրա ստեղծագործության նկատմամբ: «Մոգական հմայք մը,—գրել է Գ. Խաչատուրյանը,— շատ կանուխեն արդարև սկսած էր լուսապսակել իր անունը»¹: Երիտասարդ Նարեկացու տաղանդի ճանաչման առաջին հայտը պետք է համարել Վասպուրականի թագավոր Գուրգեն Արծրունու պատվերը՝ գրելու Երգ երգոցի նոր մեկնություն: Նարեկացին մեկնությունն ավարտել է 997 թ.: Այսինքն Նարեկացին արդեն հեղինակություն էր թագակիր պատվիրատուի համար:

Երկրորդ վկայությունը Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսի պատվերն է՝ գրելու Ապարանից Խաչի պատմությունը: Բյուզանդական Վասիլ և Կոստանդին կայսրերը ոսկեհուռ մի խաչ են ուղարկում Ստեփանոս եպիսկոպոսին, սրա քոջ որդու՝ Կոստանդնուպոլսում պատիվների արժանացած մի զինվորականի ձեռքով: Խաչը 983 թ. մեծ շուքով Ս. Կարապետի վանքից փոխադրում են Ապարանից վանքի Ս. Աստվածածին նորակառույց եկեղեցի: Ստույգ հայտնի չէ, թե մասնակցել է արդյոք Նարեկացին այդ հանդիսությանը, բայց նա ընդունել է Ստեփանոս Մոկացու պատվերը և այդ գործը, ըստ Գ. Ավետիքյանի, գրել է 983 թվից մեկ-երկու տարի անց:

Երրորդ վկայությունը Նարեկացու թուղթն է՝ հղված Կնավա վանքի վանահորը, ուր ընդառաջելով վանահոր խնդրանքին՝ Նարեկացին պարզաբանում է թոնդրակյան աղանդի գլխավոր կետերը և հորդորում պայքարել այդ աղանդի դեմ: Նշանակում է՝ Նարեկացին հեղինակություն էր կրոնա-դավանաբանական խնդիրներում: Եվ վերջապես, չորրորդ վկայությունը Մատյանի պատվերն է, որը Նարեկացին գրել է ոչ թե մեկ պատվիրատուի

¹ Նարեկ. Մատյան ողբերգության ս. Գրիգորի Նարեկացիի, գրաբար բնագրի հանդիպադրությամբ աշխարհաբարի վերածեց Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, Բուենոս Այրես, 1948, էջ ԺԷ:

² Նարեկ աղօթից համառոտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով աշխատասիրութեամբ նորին տեսողն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի, Վենետիկ 1827, էջ 424, ծնթ. 7:

(լինի արքա թե դիտապետ) առաջարկով, այլ «ի խնդրոյ հայցման հարց միանձանց և բազմաց անապատականաց»³: Որ Նարեկացին մեծ հոշակ է վայելել իր կենդանության տարիներին, որ նրան գովել են ու մեծարել, ակներև է Մատյանի ինքնաձադկման այն ժլատ տողերից, որոնք կենսագրական ատաղձ ունեն (Բան ՀԲ, դ): Նա ունեցել է մահ հակառակորդներ, որոնք չարախոսել, կշտամբել, բամբասել, հալածել են թեև, սակայն ոչ ոք գրավոր բացասական խոսք չի թողել Նարեկացու մասին:

11—17-րդ դարերում Նարեկացու մասին ուսումնասիրություն չի գրվել: Բացի վարքից՝ հայտնի են գրիչների հարյուրավոր հիշատակարաններ, բանաստեղծություններ՝ նվիրված Նարեկացուն, Մատյանի և մի քանի գանձերի մեկնություններ և այլն: Այդ նյութերը ցրված են ձեռագրերում, տպագիր հանդեսներում և այլուր: Նարեկացու ստեղծագործության բովանդակությունը սերունդներին մատչելի է դառնում աստիճանաբար: Միջնադարն ուրույն մեկնակետ և գնահատման այլ չափանիշ է ունեցել: Այդ մեկնակետը հիմնականում հանգում է մեղքերի խոստովանության, հոգու մաքրագործման և փրկության քրիստոնեական գաղափարներին: Վարքի տարբերակներից մեկի մեջ, հարասելով Մատյանի խորագիրը, այսպես է բանաձևված նրա նշանակությունը. «Ամենայն ոք որ և կամեսցի, սովա կարողացի հաշտեցուցանել ընդ ինքեան զՀայրն գթութեանց» (ԳՆՄՈ, 173): Մատյանն ընկալվել է որպես մի երկ, որի շնորհիվ ընթերցողը կարող է սղորթել, զղջալ և ապաշավել, թողություն հայցել և մաքրագործվել՝ ընդունելով քավության և ներման շնորհը: Այս միտքը դարեր շարունակ անցել է հիշատակարանից հիշատակարան, գրքից գիրք՝ արձակ կամ չափածո, պարզ խոսքերով կամ ճարտասանական ճոխ դարձվածներով, բայց միշտ էլ դառնալով բարեպաշտական այդ առանցքի շուրջը: Մատյանն այդպես ընկալելու հոգետրամադրությունը գալիս է Նարեկացուց: Իր գործը նա համարել է «դեղ կենաց», մաղթանքների կտակ, որն իր ընթերցողներին կարող է ընձեռել՝

Բժշկութիւն հոգւոց եւ մաքրութիւն յանցանաց,

Թողութիւն պարտուց եւ արձակումն մեղաց կապանաց:

(Բան Գ, գ)

Ըստ Սամվել Անեցու՝ Գագիկ Բագրատունու (990—1020) թագավորության առաջին տասնամյակին «փայլէր իբրև զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին»⁴: Արիստակես Լաստիվերտցին, թվարկելով ժամանակի անվանի վարդապետներին, նկատի ունենալով Նարեկացուն՝ հիշատակում է «և Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք»⁵: Մատթեոս Ուռհայեցին տալիս է դարի վարդապետների ավելի ընդարձակ ցանկ՝ հիշատակելով նաև Անանիա և Գրիգոր Նարեկացիներին⁶:

³ Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության, համահավաք բնագիր, Երևան, էջ 245: Այսուհետև՝ ԳՆՄՈ:

⁴ Սամուելի քահանայի Անեցույ Հաաբմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

⁵ Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցույ, աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 26 և 154:

⁶ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 179:

Նարեկացուն իբրև բանաստեղծի գնահատելու առաջին փորձը պատկանում է Ներսես Լամբրոնացուն: Մատյանի ԼԳ գլխից Ս. Հոգուն ուղղված աղոթքը, որը սկսվում է «Ամենակալ, բարերար, մարդասեր աստուած բոլորից» տողով, Լամբրոնացին մոծել է հայոց պատարագամատույց, իբրև նախերգանք: Լամբրոնացին գրել է այդ աղոթքի մեկնությունը, որը խիստ հետաքրքիր է կրոնավորի հոգեբանության բացահայտման տեսանկյունից ևս: Ըստ Լամբրոնացու՝ անհնարին է մեկնաբանել աղոթքի խոսքը, որովհետև այն ձուլված է աղոթարարի հոգու տենչանքին: «Արդ, ո՞րպես կարողանամք զարտասուալից հառաչումն ամենայն անձինն մեկնել կամ ուսուցանել, բայց թե փորձի ոք ընդ կիրթ նորին անցեալ՝ ծանիցէ որ նաշակ վայելեալ, յամենայն պատրանաց աշխարհիս՝ ի ստիպոյ սրտին էջոյն տուեալ՝ հրաժարէ, և միայն յայն հառաչմանէն միշտ զանձն իւր կերակրէ: Հառաչումն այն է, որ գրոց սիրոյն աստուծոյ արծարծէ, և արտասուքն է, իր զհոգւոյն աչս վնիտ ներգործէ»⁷:

Լամբրոնացին Նարեկացու հառաչանքի ու արտասուքի պատճառը տեսնում է աստվածային կատարելության նրա տենչանքի ու ձգտման մեջ: Ըստ նրա՝ Նարեկացին տենչում է Ս. Հոգու զորության լույսը «խոնարհեցուցանել և հրաշալի ազդմամբ առ ինքն ձգել», որի հայտնությունը հոգու մեջ ճանաչվում է նրանից, որ այդ լույսը խաղաղություն է ավետարանում՝ մաքրելով հոգին խռովահույզ տագնապներից:

Հաղորդվել Մատյանին՝ նշանակում էր հավատի, հույսի և սիրո լույս խառնել սեփական էությանը, բարձրանալ ինքն իրենից, նորոգվել հոգով: «Ծնորհի ամենախնամ ողորմութեանն աստուծոյ յանկ ելաել ասարտեցաւ Մատեանս աստուածային սուրբ և երանեալ վարդապետին Գրիգորի Նարեկացոյ՝ ի խնդրոյ աստուածապատի սուրբ կաթողիկոսին տանս Թորգոմայ տեանն Կոստանդեայ,—գրել է Վասիլ Ուոհայեցի գրիչը 1266 թ.,—քանզի տեսեալ զգեղ վայելչութեան բանիս, որ ամբարեալ կայ ի յաստուածախաւս Մատեանս. զի է սա դուռն և մուտ ի գալիթս աստուծոյ, որ ի ձեռն զղջման և պաղատանաց արտասուաթոր աղերսարկու աղաթից սրբոյ հարն Գրիգորի առնէ զմեղսամակարթ մարդիք նորոգ և հոգիացեալ՝ նման հրեշտակաց. զի է սա խաւսք ընդ աստուծոյ և կշտամբանք մեղուցեալ անձին և աղերս ամենայն սուրբս» (ՄՄ, ձեռ. № 4965, էջ 380 ա—բ):

Դարի այս կրթված գրչի հիմնական միտքը ևս հանգում է զղջման ու պաղատանքների միջոցով հոգին մեղքից մաքրելու բարեպաշտական պահանջին: Թեև ըստ էության նույն միտքն է արտահայտում նաև Հովհաննես գրիչը 1286 թ. գրած իր հիշատակարանում, բայց իր գաղափարը նա մատուցում է առավելապես փիլիսոփայական մոտեցմամբ, քան կրոնական տեսանկյունից: Ըստ Հովհաննեսի՝ Աստված լույս է, և որքան պայծառ է այդ լույսը մեկի մեջ, այնքան բարձր է նրա սրբությունը: Նարեկացին արտափայլել է բանական այդ լույսը, որպեսզի այն պողաբերի մեր մեջ և մենք աստվածանանք:

Իսկ Մարտիրոս գրիչը իր միտքը գրեթե ժողովրդական պարզ, առօրյա և մատչելի լեզվով է արտահայտել 1283 թ. Խորանաշատում ընդօրինակած Մատյանի հիշատակարանում.

⁷ Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսուհի եպիսկոպոսի Խորհրդածութիւն Խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 255:

Ով որ ունի խոցուած հոգի կամ մարմինն է մեղաւք ի լի
Եւ դեղ ուզէ վասն իւր հոգոյ, աստ գտանէ զիւր պիտանի:
(ՄՄ, ձեռ. № 1563, էջ 336 ք)

14—15-րդ դարերում ավելի է խորանում հետաքրքրությունը Նարեկացու նկատմամբ: Չկա հայաբնակ մի վայր, լինի բնաշխարհիկ Հայաստանում, Կիլիկիայում, թե գաղթավայրերում, ուր հայտնի չլինի Նարեկացու անունը: Ամենուր սիրով ընդօրինակում են նրա գործերը և, ամենից շատ, Մատյանը: Մատյանի ընկալման մեկնակետը մնում է նույնը, բայց նշմարվում է նոր տեսանկյուն՝ ինչպե՞ս հասկանալ Մատյանը, ի՞նչ է ցանկացել ասել հեղինակը այս կամ այն գլխում, ինչո՞ւ է նշել այս կամ այն աստվածաշնչական կերպարը և այլն:

1327 թ. Իտալիայի Սալեռնո քաղաքում Մատյանն ընդօրինակել է Անդրոնիկոս քահանան՝ ժամանակի զարգացած հոգևորականներից մեկը: Նրա համար ևս Նարեկացու Մատյանը «աստուածազարդ և հոգեպատում» գիրք է՝ գրված Ս. Հոգու ներշնչմամբ: Նրա կարծիքով հեղինակը՝ Գրիգոր Նարեկացին, «զդէմս առեալ ամենեցուն՝ զարդարոց և զմեղաւորաց ուժգին բաղձանաւք և հառաչանաւք ի գորով և աղիողորմ բանաստեղծությամբ զարթուցանէ զբնաւին թմբրութիւն և զյիմարութիւն բանդագուշեալ մտաց մերոց տեսութիւն» և «բազմապիսի յեղանակաւ և յորդորական քաջալերութեամբ կոչէ զամենեսեան յանպատում մխիթարութիւն, միջնորդելով ընդ աստուած և ընդ մարդիկ՝ զամենեցունց ընդ ինքեան վարկանելով զպարտիս, համանման գոլով այնմ, որ զմեղս մեր եբարձ» (ՄՄ, ձեռ. № 1562, էջ 258ք—259ա):

Թափանցիկ է զուգահեռը Հիսուսի և Նարեկացու միջև: Նարեկացու աստվածամանության իդձը Անդրոնիկոսը համարում է իրագործված. նա միջնորդ է Աստծու և մարդկանց միջև՝ իր անթերի մարդկայնությամբ և աստվածային հոգու կերպարով:

Եթե Ղազար գրիչը 1333 թ. գրած իր հիշատակարանում Մատյանի նշանակությունը տեսնում է այն բանի մեջ, որ նրանով կարելի է քաղություն գտնել և փրկության հույս, «որով մերձենամք առ աստուած և մշտընջենաւորութիւն անմահական կենաց» (ՄՄ, ձեռ. № 2557, էջ 132ա), ապա նույն դարի մեկ այլ գրիչ՝ Նորոգեսը, Մատյանը բնութագրում է որպէս մեղքերի խոստովանության աստվածախոս մի գիրք և եթե մեկը «որպէս արժան է պաղատեսցի սովաւ առ ողորմած անոխակալ տէրն, հաւատամ ստուգապէս թեթևանալոյ ի ծանրաբեռն կրիցն մեղանացն»⁸:

Առաջին պահ թվում է, երկու գրիչների մոտեցման միջև տարբերություն չկա: Բայց դժվար չէ նկատել, որ Ղազարի հաշաքն ավելի շուտ ուղղված է դեպի երկինք, մինչդեռ Նորոգեսինը ավելի շուտ հակված է երկրին: Եվ առհասարակ, եթե մի կողմից ընդգծվում է Մատյանի հոգևոր դերը որպէս «անապարհ կենաց, որ յերկինս տանի» (ՄՄ, ձեռ. № 5921, էջ 343ք), որպէս «ստացուած զպատուական և աստուածային և վերին պայծառութեանն առիթ» (ՄՄ. ձեռ. № 10182, էջ 209ա), ապա մյուս կողմից շեշտվում է նրա գեղարվեստական ներգործության, բարոյափիլիսոփայության գործնական նշանակությունը: Ըստ Հովհաննէս գրչի՝ Մատյանը

⁸ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Ն. Էպիսկոպոս Պողոսյան, Բ. Ե, Երուսաղեմ, 1971, էջ 21:

հոգեշահ մի գիրք է, որը կարող է լինել «մեղաւորաց՝ սփոփանք, տարակուսելոցն՝ մխիթարանք, վշտացելոց՝ աւգնական, անգելոց՝ կանգնումն, և յետ Քրիստոսի՝ լուսաւորիչ աշխարհի» (ՄՄ, ձեռ. № 5076, էջ 127բ):

Հիշատակարանների մեջ իր քնարականությամբ առանձնանում է Թումա գրչի հիշատակարանը՝ գրված Վանում, 1391 թվականին: Թուման իրեն արժանի չի համարում նույնիսկ շոշափելու, էլ ուր մնաց թե ընդօրինակելու. «Ձեռք, որ ի մեղքն շաղախի, գիա՛րդ զսա շօշափեսցի»: Բայց և ընդօրինակում է՝ զիջելով իր ծերունի հորեղբոր՝ Սիմեոն քահանայի թախանձանքին, որն իր վարպետն էր նաև.

Արտասուալից աղաչէր զիս, թէ՛ Կատարէ զիմ խնդրելիս,
Խնդրեմ զգանձս հրաշալիս՝ Նարեկայ սուրբ վարդապետիս,
Այնչափ չհանգչիմ ես յաշխարհիս յընչոր հայիմ զգիրքս ի գրկիս:
(ՄՄ, ձեռ. № 1874, էջ 336ա—337բ)

Մատյանի հուզականության ուժն է, որ թույլ է տվել մատենագիր Մատթեոս Զաղույեցուն Նարեկացու խոսքը բարձր դասել սաղմոսներից. «Մին փոխ Նարեկացի լաւ է, քան զամենայն սաղմոս Դաւթի» (ՄՄ, ձեռ. № 6607, էջ 52ա): Զուղայեցին զգացել է, որ իր ժամանակի՝ 14—15-րդ դարերի մարդու հոգուն առավել հարազատ է Նարեկացին, քան Դավիթը:

Նարեկացու մասին միջնադարում պատմաբանական, բանասիրական աշխատություններ չեն գրվել: Բայց, ըստ իս, եղել են փորձեր: Այդպիսի փորձ է Ստեփանոս Տիվրիկեցու հիշատակարանը՝ գրված 1366 թ., Ավագ վանքում: «Ի չորք հարիւր յիսուն և մի (1002—Ա. Ղ.) թուին է զգիրքս արարեալ Նարեկացին Գրիգորիոս,—գրել է նա,—և չորիւք յեղանակաւք տանի զքանս երանեալ սուրբ հայրս Գրիգորիոս. **պաղատանաւք առ աստուած. և ըստ արկածից բանասարկուին. ձաղանաց անձին և յուսադրութիւն շնորհացն աստուծոյ:** Ունի խառնեալ և պատմական բանս, առակաւորս և ներթողեանս ինչ՝ խառնեալ մեկնութիւնս և գոհացողականս. նա և իրս ինչ խառնեալ չնչինս և զարմացուցիչս, արկեալ ընդ փակիւք, յողբոց սկսեալ և ի գոհութիւն ասարտեալ աղաչանաւք» (ՄՄ. ձեռ. № 2088, էջ 4բ):

Սա գրականագիտական նուրբ վերլուծության փորձ է՝ մի կողմից հասկանալու Մատյանի գործողության զարգացման հոգեբանական շարժառիթը, մյուս կողմից՝ բացահայտելու նրա կառուցվածքի տարրերը և, վերջապես, նաև ժանրի բնույթը՝ ողբ, որն ավարտվում է լավատեսական հույսի գոհաբանությամբ:

Մատյանը մտահղացված է որպես ամբողջական գործ: Նա բաժանված է միայն գլուխների: Բայց արդեն 12-րդ դարից հայտնի են փորձեր՝ առանձին գլուխներ վերնագրելու՝ տարբեր նպատակներով կիրառելու պահանջից մղված: Մատյանը մասերի բաժանելու մի փորձ արվել է 14-րդ դարում: Դա մի ձեռագիր է՝ ընդօրինակված 1369 թ., Արտամետում, որի գրիչն է Ստեփանոս Արտամետցին: ԼԴ գլխի բ հատվածից առաջ նա թողել է այսպիսի վկայություն. «Գրեցաւ յերից գրոցս զմի գիրքս առաջին» (ՄՄ, ձեռ. № 5883, էջ 159ա): Այնուհետև, ՀԴ գլխից հետո, ՀԵ գլխից առաջ գրել է այսպես. «Արդ, գրեցաւ կարողութեամբն աստուծոյ երկրորդ գիրգս սուրբ վարդապետին Գրիգորի Նարեկայ, ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի՝ Ստեփանոսի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց» (էջ 339բ): Նշանակում է՝ Մատյանը բաժանվել է երեք գրքերի: Սա չէր կարող լինել Նարեկացու-

նը: Բայց մասերի, գրքերի, դրվագների բաժանելու այս փորձը ծագել է Մատյանն ավելի լավ ընկալելու պահանջից: Չէ՞ որ հայ մատենագրության նշանավոր երկերը՝ սկսած Խորենացուց, Եղիշեից, Փարպեցուց մինչև Հովհաննես Դրասխանակերտցի, Ասողիկ և ուրիշներ ունեն ուրույն կառուցվածք և երբեք չեն կրկնում միմյանց: Թերևս բաժանման այդ փորձը կատարել է Մխիթար Սասնեցին, որի ձեռագրից էլ ընդօրինակել է Ստեփանոսը: Սասնեցին նշանավոր վարդապետ էր (մոտ. 1260—1337): Գ. Ավետիքյանը ձեռքի տակ ունեցել է մի ձեռագիր՝ գրված 1325 թ., որը համեմատված է եղել Մխիթար վարդապետի ձեռագրի հետ՝ «առ որ յիշատակագիր համառօտ յաւելեալ ազդ առնէ՝ կարի վստահանալ ի նոյն»⁹: Մատյանը Նարեկ է կոչվում հավանաբար 13-րդ դարից: Նարեկացու վարքի տարբերակներից մեկում՝ գրված 1309 թ., ասված է՝ «յօրինեաց զհրաշալի Գիրս աղօթից, որ յանուն տեղույն Նարեկ կոչի»¹⁰:

Հավանաբար 13-րդ դարում են գրվել Մատյանի և Նարեկացու մի քանի գանձերի մեկնությունները: Մատյանի մեկնության հնագույն տարբերակը հայտնի է 1271 թ. ընդօրինակությամբ (ՄՄ, ձեռ. № 5518, էջ 253ա—305բ): Ըստ գրչի հիշատակարանի՝ մեկնության հեղինակը Հակոբ Կլայեցի կաթողիկոսն է (1268—1288): Սա հավանական է, բայց կարոտ է ապացուցման:

Մեկնությունն ունի որոշակի գրապատմական և գիտական արժեք: Նախ՝ գրված է մատչելի, պարզ և գրեթե խոսակցական լեզվով, երկրորդ՝ մեկնիչը մեծ ուշադրություն է դարձրել խրթին բառերի բացատրություններին, չխուսափելով արաբերեն և թուրքերեն համարժեքները տալուց, երրորդ՝ իր բացատրությունների մեջ ելնում է ժամանակի գիտության մակարդակից: Պատահական չէ, որ մեկնությունը հրատարակվել է Մատյանի տասնյակ տպագրությունների հետ և, ինչ խոսք, ծառայել է իր նպատակին: Նույն հեղինակի նույն մոտեցմամբ էլ մեկնաբանված են Ս. Հոգուն, Խաչին և Եկեղեցուն նվիրված գանձերը (ՄՄ, ձեռ. № 59, էջ 199ա—202բ):

Առանձին բանաստեղծներ Նարեկացուն նվիրել են ներբողներ, տաղեր, երգեր¹¹:

16—17-րդ դարերի կյանքի անբարենպաստ պայմանների հետևանքով նվազում է հետաքրքրությունը առհասարակ մշակույթի նկատմամբ: 17-րդ դարի կեսերից նկատվում է զարթոնք: Հայերը, ինչպես գրել է Մ. Աբեղյանը, «կամ պետք է ոչնչանային և վայրենանալով ընկնեին, և կամ, եթե ազգի մեջ կենսունակության դեռ ուժ կար, մեծ ջանքերով նորից ձգտեին

⁹ Նարեկում էջ Ժ:

¹⁰ Ցայսմաուրբ. Կ. Պոլիս 1834, Յառաջաբան և էջ 99: Տես նաև՝ ԳՆՄՈ, էջ 180:

¹¹ Գրիգոր Խլաթեցին (1349—1425) Նարեկացուն դրվատել է այսպես.

Որպես զարևն ի յաստեղաց՝ էր նա ի մեջ վարդապետաց,

Բամից հանուրց հոետորաց և բանիբուն գիտնականաց:

(ՄՄ, ձեռ. № 1573, էջ 6 բ)

Առաքել Սյունեցին (1350—1425)՝ այսպես.

Յանեղ լուսոյդ լոյս կոչեցար, յաշտանակի մարմնոյդ եղար,

Յեկեղեցոյ ջահ վառեցար, խաւար հոգոց դու լուսարար:

(ՄՄ, ձեռ. № 2088, էջ 339ա)

Հակոբ Նալյանը (1706—1764)՝ այսպես.

Սանդուղք երկնահաս՝ առ աստուած ելման,

Ի հեղեղաց մեղաց՝ զերծուցիչ տապան:

(Մեկնութիւն աղօթից, էջ 7)

կենդանության»¹²: Նարեկացին դառնում է նորոգման հույսի ու ջանքի սատար: Նորից ջանասիրությամբ ընդօրինակում են նրա գործերը: Հիշատակարանների հեղինակները հաճախ բառացիորեն կրկնում են հներին և միայն երբեմն-երբեմն զեղում իրենց բարեպաշտական զգացմունքները: Այդ շրջանի հիշատակարաններից մասնակի հետաքրքրություն են ներկայացնում այլազգիների գերությունից Նարեկն ազատելու մասին տեղեկությունները¹³:

17-րդ դարում հասունացավ Մատյանը տպագրելու անհրաժեշտությունը: 1673 թ. Մարսելում մեծանուն Ոսկան Երևանցին ձեռնարկեց Մատյանի տպագրության գործը: Տպագրությունը, սակայն, մնաց թերի՝ Ոսկան Երևանցու (1613—1674) մահվան պատճառով (ԳՆՄՈ, 197):

18-րդ դարը առանձնահատուկ տեղ ունի նարեկացիագիտության զարգացման մեջ: Դարամուտը բացվեց Նարեկացու Մատյանի և նրա մի քանի զանգների հրատարակությամբ: Գիրքը լույս տեսավ 1700—1702 թթ. Կոստանդնուպոլսում (ԳՆՄՈ, 197—199): Բնագիրը տպագրության էր պատրաստել Երուսաղեմի պատրիարք, մատենագիր, հասարակական-եկեղեցական գործիչ Մինաս Ամդեցին (մահ. 1704): Նա բնագիրը պատրաստել էր Երուսաղեմի ձեռագրատան մի գրչագրի հիման վրա՝ համեմատելով Էջմիածնի, Սաղմոսավանքի, Խոր Վիրապի և Սևանա վանքի հինգ այլ ձեռագրերի հետ¹⁴:

1276 թ. լույս տեսավ Մատյանի երկրորդ տպագրությունը՝ դարձյալ Կոստանդնուպոլսում: Նախորդի համեմատությամբ սա ունի մի քանի ա-

¹² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 511:

¹³ Այդպիսի մի հիշատակարան թողել է Սեբաստիայի եպիսկոպոս Մելքիսեթը՝ 1602 թվականին. «Որ տեսի զայս աստուածաշունչ մատեանս ի ձեռն այլասեռից, որ կարի անդէպ և անխնամ շոշափէին և ի ձեռանէ ի ձեռն տային կատակելով: Եւ իմ տեսեալ զայս մատեանս ի ձեռս հէնից ասպատակողաց, և փաղաքշանաւք ժտեցայ, մինչ զի կամք արարին տալ ինձ զսայ. ապա սակաւ ինչ ի յանցաւորէս գին տուեալ սմա և գնեցի զանգին մարգարիտս. որ էր խախտեալ և տերևտեալ և անագամ մարդոյ հանդիպեալ, որ զայս լուսատու ճրագիս զակն խաւարացեալ էր... Այլ ես անարժան ծառայս... Մելքէսէթ եպիսկոպոս Սեփաստիացի ... կրկին նորոգեցի զսայ զտեղ-տեղ ուլայելով և զտեղ-տեղ սպունկով լուանալով՝ ահիւ և դողութեամբ, վասն զգիրն ոչ եղծեալ սղագաւ...» (ՄՄ, ձեռ. № 1875, էջ 228բ—229ա):

Ահա մեկ այլ հիշատակարանում՝ գրված 1776 թվականին: «Արդ, թուական Հայոց էր ՌՄԻԵ (1225+551=1776), որ հագարացիք գնացին յերկիրն Ռշտոնեաց առ ի թալանել. զերկիրն ամենայն ասար էարկ և արար աւերակ, և մանաւանդ ի սուրբ ուխտն Նարեկայ: Բազում թալան բերեալ էին ընդ ինքեանց. ի բազմաց մինն ի այս սուրբ Նարեկացու աղօթագիրքս է: Ոմն անուն Կարապետ, որ մականունն Խողեղա ասի, իբր թէ Աստուածատուր թարգմանի, սայ իւր հալալ արդեանց, այսինքն իւր վաստակն արծաթէն տաւ զայս գիրքս ազատեաց ի ձեռաց անօրինաց, և ապա կրկին ռիւֆ (նվեր, ընծա—Ա. Ղ.) արաք սուրբ Նարեկայ գերեզմանին՝ յիշատակ իւր ծնողացն Գոլանին և մօրն Աղաբէկուն, կողակցուն՝ Սուլթանին և իւրեանց տանց մեծի ու փոքու. միշտ՝ ամէն» (ՄՄ, ձեռ. № 57, էջ 271բ):

¹⁴ «Արդ, ես՝ տէր Մինաս արքեպիսկոպոս և պատրիարք սրբոյ Երուսաղեմի, որ ի վիճակին Հայոց. ի կանուխ ժամանակաց ունելով փափաք ընդ աստուածային գրոցս այսմիկ՝ միշտ և ամենայն ուրեք մխիթարէի սովաւ: Իսկ ի չուելն իմ ի սուրբ Երուսաղեմ ի թուին ՌԺԽ (1691) գտի անդ ևս զքանս աղօթից սրբոյ Նարեկացոյն այլ ևս գլուխս Ե (5) որպէս տեսանի ի վերջն գրքոյս այսմիկ: Եւ զկնի ամաց ի գնալն իմ ի սուրբ աթոռն Էջմիածին՝ ի նորին գրատանէ, Սաղմոսավանքից, ի Խոր վիրապէ և ի Սևանու անապատէ ետու բերել զհինգ գիրք Նարեկի և սկսայ սրբագրել զսա բազում զգուշութեամբ՝ այսինքն զտղայեցեալսն ի գրչաց ողղագրեցի ի հնգից օրինակէ» (Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ արարեալ, Կ. Պոլիս, 1700—1702, Յիշատակարան, էջ ԾԾԱ):

ռավելություններ. ա) բնագիրը պատրաստել են «ի բազում և լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբք սրբագրութեան՝ զայլ և այլ օրինական ընդ միմեանս համեմատելով»¹⁵, բ) սրբագրել են առաջին հրատարակության վրիպակները, գ) լուսանցքում նշել են աստվածաշնչական հղումների արքյուրները և, վերաջպես, դ) ավելի շատ տեղեկություններ են հաղորդել կատարված աշխատանքի մասին: Տպագրությունն իրականացրել են Կոստանդնուպոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտը (1678—1741), Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակիրը (17—18-րդ դդ.), հղումները կատարել է Հարություն արեղան, սրբագրությունը՝ հայտնի բանաստեղծ և քերականագետ Պաղտասար Դպիրը (1683—1788):

Մատյանի նշանակությունը գնահատված է զուտ միջնադարյան ոգով: Մարդ պետք է ձգտի աստվածանալու, իսկ դա կարող է լինել ոչ այլ կերպ, «եթէ ոչ հաւատով միայն»: Եվ ապա՝ «թէպէտ յաստուածն մերձենալ հաւատով է և ոչ այլ իւրք, բայց և հաւատոյն սնունդ՝ գործն է և գործոյն գերագոյն՝ աղօթք»: Լուսաբանելու համար այս միտքը նախաբանի հեղինակը դիմում է այսպիսի համեմատության. «Զի որպէս տունկ իմն տնկեցեալ ի հողոջ, եթէ ոչ ոռոգանիցի ստէպ-ստէպ և ոչ ներընդունիցէ զարեգական ջերմութիւն, ոչ անէ բնաւին, այլ խամրի և չորանայ. այսպէս և հաւատն առանց աղօթից ջերմութեան և արտասուացն ոռոգման՝ խամրանայ օրըստօրէ և անպտուղ լեալ՝ մեռանի»¹⁶:

1745 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Հակոբ Նալլանի «Գիրք մեկնութեան Աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ» ուսումնասիրությունը, որը բաղկացած է՝ ա) նախադրությունից (էջ 1—12), բ) Մատյանի մեկնությունից (էջ 13—720) և գ) ներբողների մեկնությունից (էջ 721—1051): Նալլանը եկեղեցական մատենագիր էր, աստվածաբան և բանաստեղծ: Լեռն այսպէս է բնութագրել նրան. «գրական մարդ էր և իբրև այդպիսին, շատ բեղմնավոր գրիչ ուներ: Տարաբախտաբար, դարն այնպիսին էր, որ նրա ընդունակությունները պարփակվեցին միայն կրոնական նեղ շրջանակների մեջ»¹⁷: Կրոնական ոգին էլ իր ուժեղ կնիքն է դրել Նալլանի այդ ուսումնասիրության վրա: Գիրքը բացվում է մի նախադրությամբ, ուր նա անդրադառնում է Նարեկացու կյանքին, կրթությանը, դաստիարակությանը, բնավորությանը և այլ հարցերի: Նախադրությունը ոչ այնքան վերլուծական մտքի արգասիք է, որքան պաշտելի անձի նվիրված ներբող: Նալլանի սքանչացման աստիճանը հասնում է այնտեղ, որ, հակառակ փաստերի, Նարեկացու կյանքի տևողությունը հավասարեցնում է Հիսուսի տարիքին, զուգահեռներ է տանում աստվածաշնչական կերպարների և Նարեկացու միջև: Նարեկացու ստեղծագործությունը Նալլանը մեկնաբանում է համաքրիստոնեական հայացքների տեսագծով՝ համեմատությունների ու հակադրությունների համար դիմելով եկեղեցու հայրերի, անտիկ մտածողների, միջնադարի հայ և օտարազգի բազմաթիվ հեղինակների ամենատարբեր աշխատություններին: Նրա պատկերացրած Նարեկացու համար չկա ներքին հակասությունների և որոնումների լարված վիճակ: Կա սրբության ձգտման ծարավ, աստվածանալու կրոնախանդ ջերմեռանդություն: Նալլանն իր առջև խնդիր չի դնում լուսաբանելու այն հարցը, թե պատմական ու մշակութային ինչ օրի-

¹⁵ Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոկտորի, Կ. Պոլիս, 1726, էջ ՆԻԷ:

¹⁶ Նույն տեղում, էջ 2—3:

¹⁷ Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 454:

նաչափությամբ պիտի հանդես գար Նարեկացին, ինչու ժողովրդական բանահյուսությունը պետք է ազդեր Նարեկացու ստեղծագործության վրա, ինչու պիտի փոխվեր վերաբերմունքը դեպի մարդն ու բնությունը, դեպի եկեղեցին և այլն: Նալյանի համար Նարեկացին վեր է ժամանակից, պատմահասարակական միջավայրից դուրս, զուտ հոգևոր հետաքրքրությունների տեր բանաստեղծ, որի համար էականը առհասարակ մարդն է՝ աստծու, աստված՝ մարդու հարաբերությամբ: Իբրև գնահատման բարձրագույն չափանիշ, Նալյանը Մատյանը համարում է համառոտ Աստվածաշունչ և երկրորդ Ավետարան. «Այնքան առատացաւ յարդիւնս բանից մինչ զի համարձակիմ ասել, թէ զաղօթական բանս իւր իրար համառօտարան իմն Աստուածաշունչ և իբր երկրորդ Աւետարան»¹⁸, Նարեկացուն՝ երկրորդ Պրոմէթէա, որը «գողացեալ զհօր յաստուծոյ և շնորհեալ մարդկան»¹⁹:

Նալյանի գրքի մնայուն արժեքը պետք է տեսնել ոչ թե նրա կրոնահայրենասիրական գաղափարների, այլ Նարեկացու ստեղծագործության բնագրագիտական դիտողությունների, բառաբացատրությունների, հայ մատենագրության հետ ունեցած առնչությունների մատնանշման մեջ: Նրա մի շարք դիտողություններ հաշվի են առել 1763 և 1774 թ. հրատարակության պատրաստողները (ԳՆՄՈ, 202—206): Իր աշխատանքի նպատակն ու խնդիրը Նալյանը բացատրել է այսպես. «Արդ, քանզի մտաբերելով մեր, թէ ներքին գեղեցկութիւնք բանից սրբոյ վարդապետիս, բառիք, իբր ամպովք թաքուցեալք էին, վասն այնորիկ ջանացաք ձեռնարկել առ ի զբանս լուծանել»²⁰: Նալյանը Մատյանն ընթերցել է իր դարի ու իր սերնդի աչքերով՝ ձգտելով թափանցել նրա ներքին գեղեցկությունների մեջ և համեատորեն խոստովանել, թե՝ «Ադամանդե պալատին խեցիե դուռ շինեցի»²¹:

1774 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Մատյանի, եթե կարելի է ասել, առաջին քննական հրատարակությունը (ԳՆՄՈ, 202—206): Հրատարակիչները բնագիրը պատրաստել էին՝ օգտագործելով շուրջ երեք տասնյակ ձեռագրեր: Տպագրությունն իրականացնելով «համեմատութեամբ հնագոյն և ընտիր ձեռագիր օրինակաց»²², նրանք սրբագրել են բազմաթիվ սխալներ, վերանայել մի քանի գլուխների կարգը, ճշտել կետադրությունը, հաշվի առել Նալյանի առանձին դիտողություններ և այլն: Գիրքն ունի գլխավոր տարբերությունների ցուցակ, խրթին բառերի բացատրական բառարան, վարքի մի տարբերակը, որը, ինչպես կարծում է Պ. Խաչատրյանը, ըստ երևույթին նույն ժամանակ էլ հորինել է» (ԳՆՄՈ, 203):

Նարեկացու կյանքին ու գործին անդրադարձել է նաև պատմաբան Միքայել Չամչյանը (1738—1823): Նա ամփոփել է այն ամենը, ինչ հայտնի էր Նարեկացու վարքից, հիշատակարաններից, ավանդագրույցներից: Նարեկը նա համարում է եզակի ստեղծագործություն, որի նմանը «Ցարդ, չերևցաւ յաշխարհի»²³:

Նարեկացիագիտության այս փուլի բարձրագույն մակարդակը հանդիսացավ Գաբրիել Ավետիքյանի (1750—1827) վաստակը: Նա նոր աստիճան

¹⁸ Հ. Նալյան, Մեկնութիւն աղօթից, էջ 5:

¹⁹ Նույն տեղում, էջ 6:

²⁰ Նույն տեղում, էջ 15:

²¹ Նույն տեղում, էջ 720:

²² Նարեկ. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոռտորի, Կ. Պոլիս, 1774, էջ 7:

²³ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, 1785, հ. Բ, էջ 853:

նի բարձրացրեց 18-րդ դարի թե բնագրագիտական և թե մեկնաբանական աշխատանքը: 1801 թ. Վենետիկում լույս տեսավ Մատյանը՝ Ավետիքյանի մեկնություններով: Ընթերցողներին ուղղած իր խոսքում Ավետիքյանը Նարեկացուն ներկայացնում է 18-րդ դ. կրոնա-հայրենասիրական մեկնակետից: Հունաստանը հպարտ է, որ Հոմերոս ունի, Իտալիան՝ Վերգիլիոս, մինչդեռ «վեհ քան զնոսա առ Հայաստանեայքս ծագեաց երանաշնորհն Գրիգորիոս, որ գիտաց զապստամբ հոգին բանաստեղծութեան հնազանդել ընդ թեօք աստուածայնոյ հոգւոյն»²⁴, — գրել է Ավետիքյանը:

Ավետիքյանը քննադատաբար է մոտեցել հին լուծմունքներին: Գնահատելով, որ Նալյանը մեծ ծավալի ծանր գործ է կատարել, նա միաժամանակ նշում է այդ գործի հիմնական թերությունը. «բայց ընդարձակութեամբն յայլ խօսս վարդապետականս կամ բանասիրականս՝ ոչ ժամանեալ տալ զնշմարիտ տեղեկութիւն առաջի եղելոց բանիցն»²⁵:

Ավետիքյանն իր աշխատանքի ելակետն ու նպատակն է համարել բնագրի ստուգության խնդիրը. «առ ի գիտ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է խնդրելի»²⁶ Այս դրույթը այսօր մնում է բանասիրության առաջին պատվիրանը: Մատյանը, ինչպես նաև մի քանի ներբողներ Ավետիքյանը մեկնաբանել է հետևյալ սկզբունքներով. ա) բարդ բաների բացատրություններ, բ) լեզվա-ոճական խրթին արտահայտությունների, շարահյուսական դարձվածների և աստվածաբանական հասկացությունների բացատրություններ: Ավետիքյանը բառարանագիր էր, և չկա բարդ, խրթին, հազվագյուտ մի բառ, որին անդրադարձած չլինի ծանոթագրությունների մեջ կամ առընթեր բառարանում: Բնագրագիտական ոչ մի վիճելի խնդիր, տարակուսելի ոչ մի հարց ու կետ չի վրիպել նրա հայացքից: Հետագա բոլոր հետազոտողների համար Ավետիքյանը եղել և մնում է հեղինակություն:

Ավետիքյանի համար ևս Նարեկացու ստեղծագործությունն անսպառելի է: Ասպարեզը մնում է ուրիշներին՝ հաջորդ սերունդներին: Նա հետևորդներին է պատգամել թե իր վաստակի և թե նրանց ապագա աշխատանքի գնահատման այս չափանիշը. «սքանչելարուեստ Մատենիս բարձութիւն կամ խորութիւն գերազանցէ միշտ, քան զլար չափողի»²⁷: Սա պետք է իմանալ Նարեկացու մասին գրելուց առաջ: Գրելուց հետո՝ պիտի խոստովանել դա:

²⁴ Նարեկյուն, էջ Դ:

²⁵ Նույն տեղում, էջ Է:

²⁶ Նույն տեղում, էջ Ժ:

²⁷ Նույն տեղում, էջ ԺԲ: